ԳՈՒՅՆԻ ՄՈԳԱԿԱՆ ՈՒԺԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐՈՒՄ

ԱՍՏՂԻԿ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

Գույները հավատալիքներում բազմիմաստ և բազմաբովանդակ են: Դրանք մեծամասամբ դրական՝ բարեբեր գործառույթներ ունեն, բայց կիրառվել են նաև բացասական կախարդության մեջ, որին հոդվածում գրեթե չենք անդրադառնում:

Գույների գործածությունը երբեմն առնչվում է սրբազան թվերի հետ՝ չար աչքից պաշտպանելու համար յոթ գույնի թելերը «խառնում են իրար», կապում երեխայի վզին և թևին: Յոթ գույնի թելերով ձուն զարդարում էին, դնում անկյունում, որպեսզի բնակարանը աչքով չտային (տեղեկություն հաղորդողը արմատներով ալջավազցի էր)[1]: Կրկին յոթ գույնի կտորներից կարճ թևերով շապիկ են կարում և հագցնում երեխային՝ շորի տակից, որպեսզի նրան աչքով չտան: Իսկ արդեն աչքով տվածին բուժելու համար յոթ գույնի թելը հանգույց են անում, յոթ անգամ աղոթում են, հետո կապում են աչքով տված մարդու վզին կամ թևին[2], չար աչքից պաշտպանելու նպատակով այն ամրացնում են նաև խնոցուն[3]: Երբ երեխան սկսում է քայլել, նրա ոտի բութ մատին են յոթ գույնի թել կապում, որպեսզի չընկնի ու չվնասվի[4]: Հմայական գիրը փաթաթում են յոթ գույնի, յոթ հանգույցով թելերով և ամրացնում երեխայի թևի տակ կամ թևի վրա՝ «որպեսզի վախ չառնի»[5]: Աշնանը խոյերին յոթ գույնի թելերով զարդարում էին (գունավոր թելերով փնջիկներ էին պատրաստում, արանքներում կապույտ ուլունքներ էին դնում, որպեսզի աչքով չտային) և բաց թողնում ոչխարի հոտի մեջ[6]: Գարնանը գայլի բերանը կապելու ծեսը նույնպես յոթ գույնի թելով էր ուղեկցվում[7]: Բազմագույն թելերի ծիսական գործածությունը կապվում էր ծիածանի հետ: Ա. Պետրոսյանը գրում է. «Տիրի և ծիածանի կապը հաստատվում է իրանական ազգագրական նյութով: Իրանում Տիրին կամ Տիրը անձրևային աստվածություն էր և նրա տոնը՝ տիրագան/տիրականը որոշ առումով համապատասխանում է հայկական վարդավառին: Հատկանշական է, որ այդ տոնի ժամանակ կանայք և երեխաներն իրենց բազուկ-

---

[1] *Ա. Իսրայելյան. Դաշտային ազգագրական նյութեր (այսուհետև՝ ԴԱՆ), Հոկտեմբերյան, Էջմիածին, Աշտարակ, 1973, էջ 4:*

[2] *ԴԱՆ, Ղուկասյան, 1980, էջ 5, 12:*

[3] *Վ. Հարությունյան. Դաշտային ազգագրական նյութեր, Մարտունի, 1986, էջ 2:*

[4] *ԴԱՆ, Կամո, Մարտունի, 1982, էջ 22:*

[5] *ԴԱՆ, Լենինական, 1973, էջ 3:*

[6] *ԴԱՆ, Հոկտեմբերյան, Էջմիածին, Աշտարակ, էջ 35:*

[7] *Վ. Հարությունյան. Դաշտային ազգագրական նյութեր, էջ 5:*

ներին բազմագույն մետաքսե ապարանջաններ են կապել, որոնք խորհրդանշել են ծիածանը»[8]:

Գույնի մոգական ուժը հաճախ կապվում է հմայական խոսքի հետ. գունային սիմվոլներով արտահայտված մաղթանքներն ու օրհնանքները բացահայտում են որոշակի գույներին վերագրվող հատկանիշները՝ հանդես գալով որպես չարը խափանող, բարիք, երջանկություն, հաջողություն, ամուսնություն ու պտղաբերություն տվող հմայական բանաձևեր: Օրինակ՝ մանուկներին ուղղված օրհնանքում ասվում է՝ «Կարմիրդ կապենք», նորապսակներին՝ «Բարով սև օր չտեսնուք», տատմորը՝ «Կուռդ կանաչ», նոր տուն կառուցողին՝ «Կանաչ ու կարմիր օրով ապրես»[9]:

Գույներն առկա են նաև բուժման հմայության ժամանակ արտասանվող աղոթքում, որտեղ շեշտը դրվում է սպիտակի վրա: Այսպես՝ սրտամնան[10] անցկացնելու աղոթքն է.

Սպիտակ սարի տակիցը,
Սպիտակ Ուհաննէս դուրս եկաւ,
Սպիտակ ջուրը մտաւ,
Սպիտակ ձեռը տարաւ,
Սպիտակ ձուկը հանեց:
Անձեռը բռնեց,
Անդանակ մորթեց,
Անկրակ խորովեց,
Անիշտահ կերաւ,
Մատաժուժէն ելաւ[11]:

Թփխի[12] մահաբեր հիվանդությունից երեխային փրկելու համար «Նոր ծնած ջորու շապիկը հագցնում են նորածնին և վեց օր այդպէս պահում: Ապա մի կտորը համայիլ շինում, վզից կախում, իսկ մնացածն սպիտակ շորի մեջ փաթաթած աղօթելով թաղում»[13]: Չար աչքից պաշտպանվելու համար սպիտակ հավկիթի կեղևները կախում են բույսերի ճյուղերից[14] իսկ սպիտակ մարմարի կտորը՝ դնում շեմքի տակ[15]:

---

[8] Ա. Պ ե տ ր ո ս յ ա ն. Ծիածանը հայոց պատկերացումներում. համեմատական քննություն.– ՊԲՀ, № 3, 2010, էջ 202:

[9] Ե. Լ ա լ ա յ ե ա ն. Բորչալուի գաւառ.– «Ազգագրական հանդէս», XI, Թիֆլիս, 1904, էջ 119–121:

[10] Երբ մարդ վատ է զգում և ախորժակ չի ունենում, կարծում են, թե որևէ բանից գարշել է՝ սրտամնա է եղել:

[11] Ե. Լ ա լ ա յ ե ա ն. Բորչալուի գաւառ.– «Ազգագրական հանդէս», X, Թիֆլիս, 1903, էջ 244:

[12] Թփխին, տպխա կամ թպղը չար ոգի է, որը սպանում է նորածին երեխաներին, կենդանիներին և այլ չարիքներ է գործում:

[13] Ե. Լ ա լ ա յ ե ա ն. Ջաւախք.– «Ազգագրական հանդէս», Ա, Շուշի, 1896, էջ 275:

[14] ԴԱՆ, Սուխումի, 1976, տետր 1, էջ 20, տետր 2, էջ 8:

Ծննդաբերության ժամանակ ևս սպիտակ գույնը փրկարար ուժ ունի: Ինչպես նշում է ազգագրագետ և արևելագետ Օ. Ա. Սուխարյովան, սպիտակ գույնը Միջին Ասիայի տաջիկների ծիսական սովորույթներում բարեհաջող և երջանկություն բերող գույն է համարվում: Դրանից ելնելով երեխա ծնվելու ժամանակ տատմայրը պահանջում է բացել հատուկ մշակված այն կաշվի կտորը, որի վրա խմոր են հունցում և բլիթներ պատրաստում, որպեսզի մոմոները տեսնեն սպիտակ գույնը և օգնեն[16]: Սպիտակը համարվում է մաքրության, անաղարտության խորհրդանիշ: Սրա հետ է կապված նաև երազում տեսած ձյունն անմեղության նշան համարելը: Ժողովրդական պատկերացումներում սպիտակը բարին է, վերը, բարի ոգիների գույնն է, սևը՝ չարն է, ներքևը, ստորին ոգիների գույնն է: Սիբիրյան շամանիզմում հստակորեն բացահայտվում են նաև կարմիր–սև և վերև–ներքև հակադրությունները. սևը խորհրդանշում է ստորերկրյա աշխարհը, կարմիրը՝ վերերկրյա աշխարհը[17]:

Ուոլլիս Բաջը նշում է, որ սպիտակ, երկնագույն, կարմիր, դեղին գույների առարկաները շատ ավելի հաճախ են դառնում հմայական պահպանակներ, քան մոխրագույն, շագանակագույն ու սև առարկաները[18]: Սևը դրական է, բարեբեր՝ հատկապես երբ խոսքը վերաբերում է գիշերաքարին՝ սև սաթին, որը փրկում է չար ոգիներից, չար աչքից, վատ երազներից: Այս քարը նաև ամրացնում է տեսողությունը: Նրա գործառույթներից մեկը վախից ազատելն է՝ գիշերաքարը մարդկանց պաշտպանում է թե՛ արթուն, և թե՛ հատկապես քնած ժամանակ: Դրանից պատրաստված ուլունքը կոչվում է «վախուլինգ»: Կանայք գիշերաքարե ուլունքներ են կրում հանգիստ քնելու, զավակ ունենալու և նորածին երեխային չարքերից պաշտպանելու համար[19]: Ի դեպ, ինչպես կեղծ մարջաններն են մոգական համարվել կարմիր գույնի նմանության հետևանքով, այնպես էլ սև ապակե ուլունքները՝ նույնանալով և փոխ առնելով բնական գիշերաքարի հատկանիշները:

Ջավախքում «Սև շուն, սև կատու և սև աքաղաղ են պահում, որովհետև սրանք իմաց են տալիս չարերի մօտենալը, որոնցից և յառաջանում է թփիսին»[20]: «Աստուած տուողին կուտայ» հեքիաթում էլ սև շան արյունն է, որ բուժող ու վերակենդանացնող զորություն ունի: Հեքիաթի հերոսն այդ մասին գայլից է իմանում և թագավորի որդուն ոտից գլուխ շան արյունը քսելով, թողնելով ողջ օրն ու երեկոյան լողացնելով (երեք անգամ)՝ բուժում

---

[15] *ԴԱՆ, Թալին, 1977, էջ 33:*

[16] *Մոմոներն իգական սեռի առասպելական տարբեր արարածներ են, որոնց մի տեսակը հովանավորում է ծննդկաներին ու նորածիններին մանկան ծնունդն ուղեկցող ծեսերի ժամանակ և տատմայրերի խնամակալներն են: Նրանց շնորհիվ տատմայրերին ևս անվանվում են մոմո (*Օ. Ա. Сухарева. Мать и ребенок у таджиков. Иран, т. III. Л., 1929, с. 122, 125*):*

[17] В. В. Иванов, В. Н. Топоров. Славянские языковые моделирующие семиотические системы. М., 1965, с. 200–201.

[18] Э. Уоллис Бадж. Амулеты и суеверия. М., 2001, с. 43.

[19] *ԴԱՆ, Կամո, Մարտունի, 1982, էջ 10, 28, 44:*

[20] *Ե. Լալայան. Ջաւախք, էջ 275:*

է[21]: Ընդհանրապես տարբեր հանգամանքներում միևնույն գույնը կարող է դրական կամ բացասական դեր կատարել: Սևը որպես մահաբեր գույն դրական դեր է կատարում, երբ ոչնչացնում է չարը. օրինակ՝ չար աչքի աղոթքում ասվում է.

Սև դարն եմ գացե,
Սև օձն եմ կթե,
Պանիրն եմ դեղե,
Չար աչքին եմ կերցրե...[22]

Գույներն առնչվում են աշխարհի կողմերի, բնակչության հասարակական կառուցվածքի, չարի-բարու գաղափարների, բնության տարրերի ու երևույթների (ինչպես վերը նշված ծիածանի) հետ և այլն: Հասարակական կառուցվածքի վերաբերյալ կարելի է բերել դուալ կազմակերպություն ունեցող ժողովուրդների օրինակը, որտեղ կարմիր ու սև գույների են բաժանվում ցեղի երկու խմբերը: Այսպես է, օրինակ, Բրազիլիայի Կանելա ցեղի պատկերացումներում, որը բաժանված է երկու մայրական էկզոգամ կեսի. մեկը կոչվում է «Արևի ծագման ժողովուրդ», մյուսը՝ «Արևի մայրամուտի ժողովուրդ»: Բնության երևույթները և գույները ցեղի երկու կեսի միջև հետևյալ կերպ են բաշխված. «Արևի ծագման» կեսին է պատկանում արևելքը, արևը, ցերեկը, տարվա չոր եղանակը, կրակը, հողը, կարմիր բույսերը, եգիպտացորենը և կենդանիները, իսկ «Արևի մայրամուտի» կեսին՝ արևմուտքը, լուսինը, գիշերը, անձրևային եղանակը, կրակ ստանալու ծառը, ջուրը, սև գույնը, սև բույսերն ու կենդանիները, քաղցր բաթաթը, դդումը [23]:

Հատուկ ուշադրության են արժանի որոշակի գույների ավանդական համադրությունները: Հայ ժողովրդի ծիսական համակարգում շատ որոշակի է արտահայտված գույների կարմիր–սև–սպիտակ եռյակը[24], որտեղ սպիտակը նշանակում է երկնավոր արդարություն, կարմիրը՝ կյանք ու առողջություն, սևը՝ մահ[25]: Դրանք խորհրդանշում են տիեզերքի ուղղաձիգ եռամաս կառուցվածքը. սևը ստորերկրյա աշխարհի գույնն է, կարմիրը՝ միջին, սպիտակը՝ վերերկրյա: Սա արտահայտվում է ժողովրդական հեքիաթներում. մութ աշխարհն ընկած հերոսն (արքայազնը) իրեն պետք է զցի սև խոյի վրա, հետո՝ կարմիր, որն էլ նրան զցում է սպիտակի վրա ու հանում լույս աշխարհ[26]: Ժամանակի առումով սևը գի-

---

[21] Գ. Ե. Սրուանձտեանի Երկասիրութիւնները, Ա, Համով-հոտով, ԺԳ, Աստուած տուողին կուտայ, Թիֆլիս, 1904, էջ 216–218:

[22] Ս. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Հայ հմայական և ժողովրդական աղոթքներ, Երևան, 2008, էջ 83:

[23] А. М. З о л о т а р е в. Родовой строй и первобытная мифология. М., 1964, с. 171.

[24] Այս գույների մասին տե՛ս В. Т э р н е р. Символ и ритуал. М., 1983.

[25] Գույների իմաստների մանրամասն վերլուծությունը տե՛ս Ա. Ս տ ե փ ա ն յ ա ն. Հայ ժողովրդական տարազի զարդանախշերը (ծիսային, գունային և նշանային համակարգեր).– Հայ ազգագրություն և բանահյուսություն, 22, Երևան, 2007, էջ 28–40:

[26] Ա. Ղ ա ն ա լ ա ն յ ա ն. Հայ ժողովրդական հեքիաթներ,Երևան,1950, էջ 12:

շերն է, սպիտակը՝ցերեկը. հեքիաթում կարդում ենք. «Միրզան … կ'երթա, բռաստ կուգայ փիր հալևորի մը: Հալևոր նստեր դարի գլուխ, սև թելէ կծիկ մը ձեռք, կը կրծկէ, սպիտակ թելէ ջոջ կծիկ մ'էլ դրեր կուշտ: Կ'երթայ մօտ. կը հարցուցէ,– Էդ ի՞նչ կծիկներ են. դու ո՞վ ես:

– Որդի՛, կ'ասէ, ես ժուկն ու ժամանակն եմ, սև կը կծկեմ՝գիշեր է, սպիտակ կծկեմ՝ցերեկ է»[27]: Գուցեն այս հաջորդականության գաղափարի շնորհիվ է, որ սև–սպիտակ զուգորդումը տարածված է պաշտպանող հմայակների (ինչպես ուլունքների նախշերում կամ միմյանց հաջորդող մեկընդմեջ դասավորված ուլունքաշարերում, ասեղնագործության, գորգերի և այլ) զարդանախշերում:

Սևը բացասական, սպիտակը դրական գույն է Գրիգոր Լուսավորչի տեսիլքում. սև գույնի այծերը ջուրն անցնելով՝դառնում են սպիտակ, լուսեղեն, փայլատակող գառներ: Իսկ այն գառները, որ ջուրն անցնելով դառնում են գայլեր՝սևանում են, հարձակվում հոտերի վրա՝կոտորում[28]:

Ըստ Կ. Կոստանյանցի, «Չարերի տեղը Հայոց առասպելների մէջ միայն մութն ու անլոյս աշխարհն է … հեքիաթների մէջ եօթը գլխանի դևերը, ջադու պառաւներն եւ այլն, մութն այրերի մէջ ստորերկրեայ տեղերում են բնակում եւ մեծ մասամբ գիշերներն են գործում… մի քանի տեղ մեր հասարակ ժողովուրդը սև պառաւներին գիշերուայ մայր է համարում. եւ առասպելների մէջ այդ գիշերուայ մայրերի շունչն է, որ խաւարեցնում է երկիրը… ժողովրդի համոզմունքով սևը մի խորհրդաւոր գոյն է եւ չարի ծնունդ է. ձախորդութիւնը սև ու մութ է կոչուում. անյաջող գործ կատարողին սև երես են ասում. սևը երազի մէջ սատանայ է…անբաղդանալը սևաւորվել է նշանակում. մէկին անիծելիս ասում են «լաւ որդ խաւարի», սև կապես, «սև անյատակն երթա՛ս« եւ այլն»: Սակայն «սև հաւի արիւնը մի փրկարար միջոց է»[29]: Գրիգոր Տաթևացու բնորոշմամբ՝սևը երկրի գույնն է, սպիտակը՝ջրի, կարմիրն՝օդի, դեղինը՝հրի[30]: Ինչպես նշում է Մ. Աբեղյանը, կարմիր է երկնքի և երկրի միջև ընկած ջրեղեն երկինքը, որը, ըստ Եզնիկ Կողբացու, «…ժողովրդի բերանին կոչվում է նաև Առաքյալների կամ Աբրահամի ծով, արյունակարմիր, ծիրանի ծով»[31]:

Երբ Վարանդայում երեխա էր ծնվում, նույն օրը սանամայրը մի սպիտակ և մի կարմիր կտոր էր բերում նորածնի տուն[32]: Սպիտակ և կարմիր ուլունքներով երեխաներին պաշտպանում են չար աչքից (ինչպես ընդունված էր XX դ. երկրերդ կեսին Շամշադինի շրջանի

---

[27] *Գ. Ե. Սրուանձտեան. նշվ. աշխ., էջ 116:*

[28] *Ազաթանգեղայ պատմութիւն, Թիֆլիս, 1882, էջ 432:*

[29] *Կ. Կոստանեանց. Հայոց հեթանոսական կրօնը, Վաղարշապատ, 1879, էջ 8–9:*

[30] *Գրիգոր Տաթևացի. Գիրք հարցմանց, Կ. Պոլիս, 1729, էջ 212:*

[31] *Մ. Աբեղյան. Երկեր, հ. Է, Երևան, 1975, էջ 65–66:*

[32] *Ե. Լալայեան. Վարանդա.– «Ազգագրական հանդէս», Բ, Թիֆլիս, 1897, էջ 147:*

Արծվաբերդ գյուղում): Հարսանիքի ժամանակ ձիու վզին կարմիր և սպիտակ ժապավեններ էին կապում Ալաշկերտում[33]:

Նկատենք, որ սպիտակ–կարմիր համադրության սպիտակ գույնն ամերիկյան չոքթո և չիքասա հնդկացիների առասպելաբանությունում խաղաղության, իսկ կարմիրը պատերազմի խորհրդանիշն է: Ըստ որում՝ կախարդ-բուժարարն ասում է. «Հիշի՛ր, մի՛ գնա պատերազմ, եթե կարող ես խաղաղություն հաստատել, բայց եթե ստիպված ես կռվել, կռվիր այնքան, մինչև հոսի կարմիր արյունդ»[34]: Չիրոքիների ցեղը բաժանված էր Սպիտակ ֆրատրիայի և Կարմիր ֆրատրիայի: Առաջինը խաղաղության ֆրատրիան էր, երկրորդը՝ պատերազմի[35]: Ըստ աֆրիկյան նդեմբու ժողովրդի, սպիտակ և կարմիր գույների բինար համակարգում այս գույներն ակտիվ վիճակների հետ են կապված և համարվում են «ուժ ունեցող»: Արյունը «կարմրության» գլխավոր դենոտատն է, հաճախ նույնանում է «ուժի» հետ: Սպիտակը նույնպես կյանքն է խորհրդանշում՝ որպես կաթ և սերմ»[36]:

Կարմիրը տարբեր վայրերում նույնանում է գեղեցկության և դրական այլ հասկացությունների հետ. մալոռուսական ժողովրդական պոեզիայում այն գործածվում է երկնային լուսատուների, աղջիկների, կորովայի բնութագրության առնչությամբ: Չեխերեն ryzi նախապես նշանակել է միայն կարմիր, իսկ հետագայում ստացել է իսկական, մաքուր, չխարդախված իմաստները: Թուրքերեն kizil կարմիր է, իսկ ղրղզերեն միևնույն բառը նշանակում է գեղեցիկ, սքանչելի: Ֆիններեն կարմիր նշանակում է գեղեցիկ, չինարեն էլ «կարմիր սիրտ» նշանակում է անկեղծություն[37]:

Կարմիրը, որպես չարխափան և բարեբեր գույն, տարբեր կիրառություններ ունի. «Գութանի լծաշարքի առջևից քաշող լծի հոտաղհորևորին հաճախ կարմիր գլուխ անունն են տալիս: Այս սիմվոլիկ անունը, անշուշտ, ծագում է կարմիր գույնի հուռութ ներկայացնող գլխարկից, որն այդ հոտաղին պաշտպանում էր չար ուժերից: Այս գույնը հայոց մեջ առհասարակ չարխափան է եղել. այդ է պատճառը, որ կարմիր հագուստը կանանց տարազի հիմնական տարրն էր կազմում: Կարմիր գույնը աղերս ուներ նաև սերնդաճի հետ (հմմտ. կոսբանդը): Հոտաղի կարմիր գլխարկը, ուրեմն, թե՛ չարխափան է և թե՛ պտղաբերության սիմվոլ է»[38]: Նավասարդի գիշերը գոմերը մաքրելուց հետո անասունների տակ գարի էին ցանում և ագիներին կարմիր թելեր կապում, որպեսզի տարին առատ ու կարմիր օրերով

---

[33] *ԴԱՆ, Հոկտեմբերյան, Էջմիածին, Աշտարակ, 1973, էջ 15 (տեղեկություն հաղորդողը ծագումով Ալաշկերտցի էր):*

[34] Allice Marriott and Carol K. Rachlin, Nanih Vaya: The Sacred Bluff, Choctaw and Chickasaw, American Indian Mythology, New York and Scarborogh, Ontario, 1972, p. 98.

[35] А. М. З о л о т а р е в. *Նշվ. աշխ., էջ 140:*

[36] В. Т э р н е р. *Նշվ. աշխ., էջ 91–92:*

[37] Н. Ф. С у м ц о в. Этнографические заметки.– Этнографическое обозрение, кн. III. М., 1889, с. 130.

[38] *Վ. Հ. Բ դ ո յ ա ն. Երկրագործական մշակույթը Հայաստանում, Երևան, 1972, էջ 473:*

(երջանիկ) լիներ[39]: Լեզգիները ցլին չար աչքից պաշտպանելու համար կարմիր թելեր էին կախում վրան[40]: Գերմանացիները կենդանիների եղջյուրներին ու վզին կարմիր ժապավեններ էին կապում հիվանդություններից և ձախորդություններից պաշտպանելու համար[41]: Լոռիում «Նոր–տարու օրը տանտիկինը մի կարմիր շոր վերցրած գնում է դուրս, մի քիչ մեղր քսում տան դռանը և այդ կարմիր շորը մի տեղ փռում, որպէսզի տարին քաղցր ու կարմիր, ուրախ անցնի»: Այստեղ Նոր տարվա բարեմաղթության երգում, որ երեխաներն էին տնետուն անցնելով կատարում, կարմիրը խորհրդանշում է լիություն և երջանկություն. «Կարմիր օրեր շատ ունենաք, /Կարմիր օրով, կարմիր շորով/, Ուրախ կենաք միշտ կուշտ փորով»[42]:

Այս գույնը կարևորվում է անձրև բերելու ծեսում. Լոռիում անձրև բերելու համար երեխաները Նուրին են սարքում՝ երկու փայտ խաչաձև դնում և կապում են միմիայն կարմիր կտորով: Հետո գլուխ են սարքում, շորեր հագցնում ու ման են ածում տնետուն: Երգում ընդգծվում է նրա շորի և գոտու կարմիրը՝ «Նուրի Նուրի նազ անի/...Շիլա շաբիք հաքել ա/ կարմիր գոտիկ կապել ա»[43]:

Հարսանյաց ծիսակատարության տարբեր փուլերում կարմիր գույնը պտղաբերության խորհրդանիշ է: Զավախքում հարսանիքի հացի ալյուրը մաղելիս երեցկինը և թխելու համար հրավիրված կանայք կարմիր գլխաշորով էին ծածկում գլուխները[44]: Սևանի ավազանի Զոլաքար գյուղում հարսանիքի եզը մորթելուց առաջ կարմիր կտոր են կապում վզից և եղջյուրներից, հետո են դուրս բերում գոմից, իսկ նախկինում աղջկան տղայի տուն ձիով տանելիս, ձիու վզին էին կարմիր կտոր կապում[45]: Զանգեզուրում փեսայի տան դուռը, որտեղով հարսն առաջին անգամ պետք է մտներ ներս, զարդարում էին մետաքսյա կարմիր գլխաշորով[46]: Հարքում հարսի քողն էր կարմիր, իսկ փեսան կարմիր բինիշ (թիկնոց) էր գցում ուսերին, գլխարկի շուրջը կարմիր փուշի փաթաթում և կարմիր կոշիկներ հագնում: Կարմիր բինիշը՝ հիշատակվում է նաև թագավորագովքում.

«Մեր թագուրն էր աջ, խաչկոթ խաչ ու մաչ,
Բինիշն էր կարմիր, արևն էր կանաչ.
Մեր թագուրն էր աջ, խաչկոթ խաչ ու մաչ,

---

[39] Ե. Լ ա լ ա յ ե ա ն. Զանգեզուր.– «Ազգագրական հանդէս», Դ, Թիֆլիս, 1898, էջ 112:
[40] Г. А. Г а д ж и е в. Верования лезгин, связанные с животными.– «Советская этнография», 1977, № 3, с. 117.
[41] Н. Ф. С у м ц о в. Նշվ աշխ. էջ 131:
[42] Ե. Լ ա լ ա յ ե ա ն. Բորչալուի գաւառ, էջ 250, 252:
[43] ԴԱՆ, Լոռի, 1972, էջ 87–88:
[44] Ե. Լ ա լ ա յ ե ա ն. Զաւախք, էջ 247–248:
[45] ԴԱՆ, գ. Զոլաքար, Մարտունու շրջան, 1973, էջ 2, 6:
[46] Ե. Լ ա լ ա յ ե ա ն. Զանգեզուր, էջ 81:

Պսակն էր կարմիր, արևն էր կանանչ»[47]*:*

Կարմիրը դարեր ի վեր մոգական գույն է համարվել տարբեր ժողովուրդների ավանդություններում: Ըստ Մ. Աբեղյանի՝ «...շատ ազգերի առասպելների մէջ կայծակի յատուկ գոյներից մէկն է կարմիրը, ուստի և շատ բոյսեր իրենց կարմիր գոյնի պատճառով հենց՝ համարւում են կայծակի մարմնացում, և յաճախ ամպրոպային կամ աստուծու նուիրական գոյնն է կարմիրը»[48]*: Այն արևի, կրակի, բոցի խորհրդանիշն է*[49]*: Հնդկաստանում հարսնացուի վզին կարմիր բրդյա թել էին կապում*[50]*: Չինաստանում կարմիրը հարավի գույնն է, համարվում է ամենաերջանիկ գույնը, կապվում է կյանքի, հաջողության, էներգիայի և ամռան հետ*[51]*: Այստեղ երեխաների թևին կարմիր կտոր էին կապում և սովորեցնում էին կարմրին նայել, որպես չար ոգիներից պաշտպանող լավագույն միջոց: Շոտլանդիայում չարքերից խուսափելու համար կանայք մատներին կարմիր մետաքս էին կապում և գարնանը կենդանիներին դաշտ դուրս բերելուց առաջ, կովերի պոչերին կարմիր թելեր էին կապում: Գերմանացիները անասունների եղջյուրներին և վզին էին կարմիր ժապավեններ կապում, որպեսզի նրանց պաշտպանեին հիվանդություններից ու ձախորդություններից, ինչպես նաև՝ կենդանիներին և բույսերին՝ նույնիսկ բանջարանոցային*[52]*: Հայերը հարսանիքի եզի եղջյուրներին կարմիր խնձորներ են հագցնում և կարմիր ժապավեններ կապում, այնուհետև շուրջպար են բռնում տղայի տանը*[53]*:*

Բուժման նպատակով Ախալքալաքում կարմրուկով հիվանդացած երեխային կարմիր հագուստներ էին հագցնում[54]*: Կարմիր քարով Ակնում մարդկանց աչքերն էին բուժում. «Եթե մէկին աչքին մէջ արիւն ժողովուի, «պահեա*[55] *ընկած է» կ՚ըսեն... Ոմանք՝ կարմրագոյն քար մի կայ պահեայի համար՝ի դարման, աչքի քովն՝ի վար կը կախեն»*[56]*: Անասուն-*

---

[47] *Բ ե ն ս է. Բուլանըխ կամ Հարք գաւառ.– «Ազգագրական հանդէս», Ե, Թիֆլիս, 1899, էջ 107, 109, 111:*

[48] *Մ. Ա բ ե ղ ե ա ն. Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու հայոց պատմութեան մէջ, Վաղարշապատ, 1899, էջ 141–142:*

[49] Б. А. Литвинский. *Նշվ. աշխ., էջ 139:* Allice Marriott and Carol K. Rachlin, How the Half Boys Came to Be, Kiowa, American Indian Mythology, New York and Scarborogh, Ontario, 1972, p. 109.

[50] Н. Ф. Сумцов. *Նշվ. աշխ., էջ 131:*

[51] Д. Трессидер. Словарь символов. М., 1999, с. 168.

[52] Н. Ф. Сумцов. *Նշվ. աշխ, էջ 131:*

[53] *ԴԱՆ, Մաստարա, 1981, էջ 3:*

[54] *ԴԱՆ, Ախալքալաք, Ախալցխա, էջ 12:*

[55] *«Պահեա՝ աչքի հիւանդութիւն՝ երբ աչքը լցվում է արիւնով» տե՛ս Ստ. Մալխասեանց. Հայերէն բացատրական բառարան, հ. 4, Երևան, 1944, էջ 39:*

[56] *Յ. Ճ ա ն ի կ ե ա ն. Հնութիւնք Ակնայ, Թիֆլիս, 1895, էջ 162:*

ների «դաբաղ» (տապաստ) հիվանդությունը բուժելու համար նրանց պոզերը կարմիր սուսրով են ներկում[57]:

Նախնադարյան մարդն արյունով էր ցողում այն ամենը, ինչ ուզում էր կրկին կյանքի կոչել[58]: Դեռևս վերին հին քարի դարում հանգուցյալի մարմնին կարմիր օխրա էին ցանում, մտածելով, որ կարմիրն արյան, հետևաբար, կյանքի խորհրդանիշն է[59]: Բուրխարդ Բրենտյեսը Թել-Ասիաբի թաղումների հիման վրա հաստատում է, որ պալեոլիթից եկող սովորույթի համաձայն թաղման ժամանակ մահացածի մամնի վրա կարմիր օխրա էին շաղ տալիս, որպեսզի ապահովեին մարդու հետագա կյանքը[60]: Ելենա Անտոնովան Չաթալ-Հույուքի պեղումների արդյունքներից է եզրակացնում, որ կարմիրն ընկալվել է որպես կյանքի խորհրդանիշ[61]: Միևնույն երևույթն է տեղի ունեցել պամիրյան սակերի հուղարկավորության ծեսի ժամանակ: Այստեղ մարդկանց մի մասի կմախքներն են կարմիր օխրայով ներկված, մյուսների՝ միայն գանգերը[62]: Հայտնի է, որ Հայկական լեռնաշխարհում մ. թ. ա. III–II հազարամյակներում ընդունված է եղել հանգուցյալներին կարմիր օխրայով ծածկելը: Հարություն Մնացականյանը Լճաշենում իր պեղած մ. թ. ա. II հազ. դամբարաններից մեկի մասին գրում է. «Ննջեցյալները ներկված են եղել կարմիր օխրայով»[63]: Բացի այդ, դամբարաններում դրվող անոթների նախշերը կարմիր էին ներկում: Այսպիսով՝ կարմիրը համարվում էր արյան, կյանքի, վերածնության, հարության, արևի, կրակի գույնը:

Գրիգոր Տաթևացին նշում է, որ կարմիր գույնով ներկված ձուն աշխարհի փրկության խորհրդանիշն է. «Զատկի այս առաջին Կիրակիի Շաբաթ օրը կարմիր ձու կը ներկենք. և խորհուրդը այն է որ միայն Զատկին ձու կը ներկենք: Վասն զի ձուն, օրինակ (խորհրդանշան) է բոլոր աշխարհի... Իսկ կարմիր ներկը կը նշանակէ թէ բոլոր աշխարհս գնուեցաւ Քրիստոսի արիւնով: Եւ մենք կարմիր ձուն ձեռքերնուս մէջ առնելով յայտնի կը հռչակենք մեր փրկութիւնը: Ասոր համար է որ նախ կարմիր ձուն կ'ուտենք (կը հաղորդուինք մեր փրկութեան) եւ յետոյ ուրիշ կերակուրներ»[64]:

---

[57] *Հայաստանի պատմության թանգարանի արխիվ, № 147, գ. Շահնազար, 1935, էջ 11:*

[58] В. Э. Багдасарян, И. В. Орлов, В. Л. Телицын. Энциклопедия. Символы, знаки, эмблемы. М., 2005, с. 242.

[59] Grahame Clark and Stuart Piggott, Prehistoric Societies, London, 1965, p. 77.

[60] Б. Брентьес. От Шанидара до Аккада. М., 1976, с. 31.

[61] Е. В. Антонова. Антропоморфная скульптура древних земледельцев Передней и Средней Азии. М., 1977, с. 80.

[62] Б. А. Литвинский. Древние кочевники «Крыши мира». М., 1972, с. 133.

[63] *Հ. Մնացականյան. Յեղապետի դամբանաթումբը.– «Սովետական Հայաստան» (ամսագիր), 1957, -7, էջ 42:*

[64] *Հնախոյզ. Զատկական հաւկիթը.– Սիոն, Հայ ամսագիր, Ա տարի-նոր շրջան, թիւ 4, 1927, էջ 104: Գրիգոր Տաթևացի. Գիրք Քարոզութեան. Որ կոչի Զմեռան Հատոր, Կ. Պոլիս, 1740, էջ 606:*

Հնագույն ժամանակներից դարեր շարունակ պահպանվել է կարմիր գույնը լայն առումով բարեբեր խորհրդանիշ համարելը: Հատուկ ուշադրության են արժանի Հայաստանի ողջ տարածքի միջնադարյան բազմաթիվ այն խաչքարերը, որոնց քարե մակերեսը հատուկ ներկված է կարմիր գույնով: Կարմիր, կանաչ ու կապույտ էին ներկվում նաև XIX–XX դդ. փայտե հմայական պահպանակները, որոնց գերբնական ուժը պայմանավորված էր թե՛ այն սրբազան համարվող ծառերի տեսակներով, որոնց փայտերից պատրաստվում էին, թե՛ նախշազարդերի խորհրդանշական իմաստներով: Եվ այս դեպքում ընդգծվում է գույնի դերը: Կարմիր գույնի զորության ընկալման շարունակականության մասին են վկայում Արթիկի մանկական թաղումներում հայտնաբերված կարմիր գույնով ներկված ճաները[65], որոնց անփոփոխ կիրառությունը հասնում է մինչև մեր ժամանակները (Հայաստանի պատմության թանգարանում պահվում է կարմիրով ներկված յոթ ճաներով և այլ պահպանակներով XX դ. մի հմայակ, որը Լոռիում կախում էին մանկան օրորոցից (-4430): Այս մասին են վկայում նաև դաշտային նյութերը)[66]:

Կանաչ գույնը նույնպես կրում է կյանքի գաղափարը: Բանահյուսության մեջ այն հաճախ արտահայտվում է որպես կանաչ արև, ինչպես՝ Հարքի վերը նշված հարսանեկան երգում կամ Վասպուրականի երգի «Թագւոր, ինչ բերեմ քիոյ նման, / Քիոյ կանաչ արևու նրման» կրկնվող տողերում[67]: Կանաչն ամենուրեք ասոցացվում է բուսականության հետ, ավելի լայն առումով՝ գարնան, երիտասարդության, նորոգման, թարմության, պտղաբերության, հույսի և աճի[68], այն խորհրդանշում է վերակենդանացում և կյանք[69]: Կանաչը սերնդի շարունակության գաղափարն է արտահայտում. «Ամբողջ Սասունում ընդունված էր «կանչնաս» (կանաչես, սերունդ ունենաս) օրհնությունը»[70]:

Կանաչին վերագրվող հնագույն պատկերացումներն անցել են քրիստոնեական տոներին և ուխտատեղիներին. Զատկի հաջորդ կիրակին կոչվում է Կանաչ կիրակի, իսկ Արճեշի Ականց գյուղի լայն ժողովրդականություն վայելող սրբատեղին, որ նշանավոր էր իր «տված պատիժներով կամ տվածուրիկ շնորհներով», անվանում էին՝ Բալաք (սպիտակ) քունբեթ (գմբեթ), կանանչ չունբար (գլխու ծածկոց), խաթուն եղնիկ Ս. Տիրամեր՝ «Քեզ հավատամ, խոստովանիմ,/Կանանչ չումբար սուրբ Տիրամեր…»[71]:

Հարկ է նաև նշել, որ ժողովրդական հավատալիքներում հիվանդությունների սաստկությունն ու մահն են բնորոշում գույները: Սևը՝ որպես «գրողի սև ճիպոտ», մահաբեր է:

---

[65] Т. С. Х а ч а т р я н. Древняя культура Ширака III–I тыс. до н. э. Ереван, 1975, с. 111.

[66] *Ա. Ի ս ր ա յ ե լ յ ա ն. XVIII–XX դդ. հայկական հմայական պահպանակները, Երևան, 2012, էջ 70:*

[67] *Ե. Լ ա լ ա յ ե ա ն. Վասպուրական.– «Ազգագրական հանդէս», XX գիրք, № 2, Թիֆլիս, 1910, էջ 153–154:*

[68] Д. Т р е с с и д е р. *Նշվ. աշխ., էջ 108:*

[69] В. Э. Б а г д а с а р я н, И. В. О р л о в, В. Л. Т е л и ц ы н. *Նշվ. աշխ., էջ 181:*

[70] *Վ. Պ ե տ ռ ո յ ա ն. Սասնա ազգագրությունը, Երևան, 1965, էջ 278:*

[71] *Բ ե ն ս է. Բուլանըխ կամ Հարք գաւառ.– «Ազգագրական հանդէս», Զ, Թիֆլիս, 1900, էջ 19:*

Կարմիրը՝ որպես «գրողի կարմիր ճիպոտ», ցույց է տալիս հիվանդության երկարատև լինելը, կանաչը՝ կարճատև հիվանդությունը[72]: Կրկին անդրադառնալով ծիածանին, նշենք, որ այն «Աստծու գոտի» և «կանաչ-կարմիր» է անվանվում ու կապվում է գույների հիման վրա գուշակություններ կատարելու հետ. «Եթե դեղին գույնը մյուսներից ավել է, նշան է, որ այդ տարի շատ հիվանդություններ պիտի լինեն, երբ կանաչ գույնն է ավելի, այդ տարի ցորենն է առատ լինելու, իսկ եթե կարմիրն է ավելի՝ գինին»[73]: Որոշ վայրերում էլ համարվում էր, որ եթե կարմիրը շատ լինի՝ հարսները շատ կլինեն[74]:

Դեղին գույնով բուժում են դեղնախտ հիվանդությունը: Դա առաջին հերթին վերաբերում է դեղին սաթին, որը կախում էին հիվանդի կրծքին կամ գցում էին ջրի մեջ և ջուրը խմեցնում անոթի: Սաթե ուլունքը հաճախ անվանում էին դեղին քար: Դեղնախտը բուժելու համար սաթը ծեծում էին, մաղում ու մի թեյի գդալի չափ ջրի մեջ լուծելով՝ հիվանդին խմեցնում[75]: Ջավախքում ծեծած սաթը մեղրով են տալիս՝ օրը երեք անգամ[76]: Նոր Բայազետում կարծում էին, թե դեղնախտ էր առաջանում, երբ դրսից տուն եկողներից մեկը դեղին ուլունք էր բերում և պետք էր «հակազդել» նույն միջոցով[77]: Դեղնախտը բուժելու համար կարևոր է դեղինը. «Մի դեղնաուլինգ կամ ուլունքաշար են կախում հիվանդի վզից և դեղնությունը թափվում է»[78]: Ոսկին ևս իր գույնի շնորհիվ բուժում է դեղնախտը[79]: XX դ. Էջմիածնի շրջանի Արագած գյուղում երկու դեղին ուլունքը բթիկի (կախարդական գրի) հետ դնում էին հիվանդ երեխայի բարձի մեջ, և նա բուժվում էր: Բայց պետք էր հիշել, որ այն չպետք է թրջվեր, որպեսզի մոգական ազդեցությունը չկորչեր[80]:

Որոշակի գույների և գունային համադրությունների գերբնական հատկանիշները մեծ նշանակություն ունեն ծեսերում, հատկապես՝ չարխափան և բարեբեր նարոտ, ուսկապ (կոսպանդ) կամ ուռց սարքելիս. կարմիր, կանաչ, սպիտակ գույների եռյակն առավելապես ի հայտ է գալիս որպես նարոտ, կարմիր-կանաչը՝ որպես ուսկապ և ուռց: Հարսանիքի կապակցությամբ նարոտը հյուսվում է հետևյալ համադրություններով՝ 1. միաժամանակ երեք գույների թելերից՝ սպիտակ, կարմիր, կանաչ, 2. կարմիր ու կանաչ թելերից, 3. կարմիր ու սպիտակ թելերից: XX դարասկզբին հարսանիքի համար նարոտը հատուկ արարողությամբ էին հյուսում: Շաբաթ օրն առավոտյան ազգական ու հարևան կանայք գալիս էին թագ կապելու: Բոլորը մեկական խնձոր էին բերում՝ մեջն արծաթե դրամներ

---

[72] Ե. Լ ա լ ա յ ե ա ն. Ջաւախք, էջ 298:

[73] Ե. Լ ա լ ա յ ե ա ն. Վարանդա, էջ 221:

[74] Ն. Ս. Տ է ր - Ն ե ր ս է ս ե ա ն. Սիվրիհիսարցի կինը.–Բիւրակն.–թիւ 4, 1 փետրվարի, 1900, էջ 53:

[75] Ե. Լ ա լ ա յ ե ա ն. Բորչալուի գաւառ, էջ 160:

[76] ԴԱՆ, Ախալքալաք, Ախալցխա, էջ 9:

[77] Ե. Լ ա լ ա յ ե ա ն. Նոր-Բայազետի գաւառ.– «Ազգագրական հանդէս», XVI, Թիֆլիս, 1907, էջ 46:

[78] ԴԱՆ, Հոկտեմբերյան, Էջնիածին, Աշտարակ, էջ 19:

[79] ԴԱՆ, Թալին, էջ 10:

[80] ԴԱՆ, Հոկտեմբերյան, Էջմիածին, Աշտարակ, էջ 25:

խրած և մի քանի մետաքսե թել էին տալիս խաչեղբոր կնոջը: Նա դրամներով խնձորները հանձնում էր թագավորի մորը: Հետո մետաքսե կանաչ, կարմիր, սպիտակ թելերից պսակ էին հյուսում և ամրացնում թագավորի գլխարկին, որը նախ դնում էին փեսեղբոր գլխին, պարացնում էին նրան, հետո՝ հանձնում թագավորին: Այս ծեսը կոչվում է թագակապ կամ կարմիր-կանաչը կապել[81]: Նարոտը կապում է նաև պսակադիր քահանան: Նա պսակադրության ծեսի ժամանակ այն անցկացնում է հարսի ու թագավորի վզերին և ամրացնում մոմով, իսկ առագաստ մտնելու իրավունք տալիս, երեկոյան ժամերգությունից հետո օրհնությամբ քանդում է նարոտը: Կանաչն ու կարմիրը գեղեցիկ ձևով են ի հայտ գալիս Վանի հարսանիքում. «... ազաբբաշին... Ձեռքին ուներ պաշտոնական կոպալը, որուն վրա կպցված էին 20-ե ավելի փոքր ու բարակ մեղրամոմեր և անոնց արանքները դարձդարձիկ փաթթված կարմիր, կանաչ ժապավեններ, զանազան տեղեր ալ փակցված կանաչ-կարմիր թուղթեր: Մոմերը պիտի սկսեին վառվիլ պսակի արարողության ատեն, եկեղեցվո մեջ: Հին ավելորդապաշտություններե մեզի հասած հավատքն էր, որ ազաբբաշիի կոպալի կանաչ-կարմիր գույներու և վառված մոմերու զորությամբ չարերը կհեռանային»[82]: Նորադուզում հարսանիքի ժամանակ փեսայի կոսպանդի կարմիր թաշկինակը հարսի, իսկ կանաչն իրենց տանն էին կապում[83]: «Կանանչ-կարմիրդ կապեմ» կամ «Կանաչ ու կարմիր թագավոր դառնաս» օրհնությունները այստեղից են գալիս, քանի որ փեսայի կոսպանդը, ինչպես նշվեց, կարմիր ու կանաչ թաշկինակներով է կապվում:

Վերադառնալով կանաչ ու կարմիր գույների չարխափան զորությանը՝ արժե անդրադառնալ ուռցին. «Չար աչքի և չարքերի ազդեցությունից հարս ու փեսին ազատելու հույսով գործ էր ածվում նաև ուռցը.– սա մի փայտ է, ծայրին կանաչ և կարմիր բուրդ կապած, որ պսակի օրից մինչև առագաստի գիշերը հարս ու փեսի առջևից ման էին ածում, որպեսզի չար աչքերի և չար ոգիների ազդեցությունը հարս ու փեսի փոխարեն՝ նրա վրա անցնի»[84]: Պատահական չէ, որ հատկապես կարմիրն ու կանաչն են հիշատակվում օրհնանքներում ու երգերում. սրանք հարսանիքի ծեսի ամենաբնորոշ գույներն են ողջ Հայաստանում:

Երեխաների վզին նարոտ են կապում մկրտության ծեսի ժամանակ: Յոթ օր այն մնում է կապված, հետո քավորը հանում է վզից և բարձի մեջ են դնում[85]: Նարոտի նույն գործառույթը հիշատակվում է ավանդության մեջ. «Ծիածանը այն կանաչ–կարմիր թելն է, որ բերեց Գասպար թագաւորը, իբրև կնքահայր՝ Քրիստոսի պարանոցը կապելու»[86]:

---

[81] Ե. Լ ա լ ա յ ե ա ն. Գանձակի գաւառ, էջ 253:

[82] Ե. Տ ե ր - Մ կ ր տ չ յ ա ն. Վանեցոց հարսանիքը.– Հայ ազգագրություն և բանահյուսություն, 1, Երևան, 1970, էջ 165:

[83] ԴԱՆ, Կամո, Մարտունի, էջ 23:

[84] Ե. Լ ա լ ա յ ե ա ն. Վասպուրական, էջ 160:

[85] ԴԱՆ, Հոկտեմբերյան, Էջմիածին, Աշտարակ, էջ 19:

[86] Ե. Լ ա լ ա յ ե ա ն. Վարանդա, էջ 221:

Լծքաշ եզներին ու կթու կովերին չարքերից, հիվանդություններից, չար աչքից պաշտպանելու համար մարդիկ նարոտը մոմով ամրացնում էին նրանց եղջյուրներին: Սասունում նարոտները հյուսում էին Ծաղկազարդի օրը՝ դեռ լուսը չբացված[87]: Գարնան զարթոնքի հետ է կապված նաև բուլղարացիների «մարտենիցան», որ գործվում է սպիտակ ու կարմիր թելերից՝ գարնան գալստյան կապակցությամբ[88]:

Հայաստանում նարոտ կապելու սովորույթը շատ հին է: Նախաքրիստոնեական այս երևույթը զայրացրել է Ներսես Շնորհալուն: Նա գրել է. «Եւ զայնս որ ի տգէտ քահանայից եղեալ է ի՛ ցուակին՝ կարմիր արկանելոք ծածկեն անասունն և եղջյուրսն նարօտ ըստ հնոյն օրինի, ամենևին մի առնէք՝ զի աւելորդ է և անօգուտ է և պատճառ զայթակղութեան»[89]: Սակայն, շատ ու շատ այլ սովորույթների նման, սա էլ է հարատևել ժողովրդի մեջ և եկեղեցում: Արևմտյան Հայաստանից Արագածոտնում վերաբնակված հայերը գույնզգույն բրդե միահյուսված թելերը դեռ XX դ. երկրորդ կեսին կապում էին երեխաների բազուկներին, ուսերին և ոտքերին, որպեսզի օձերը չխայթեին[90]: Ի դեպ, ուղտերին չար ուժերից պաշտպանելիս ևս գունավոր թելերն էին գործածում թե՛ որպես մեծ թելափնջեր, թե՛ այլ պահպանակների կազմում և թե՛ որպես նուռց, որը, ըստ վարդապետ Ամատունու, «Գույնզգույն բրդե թելերով և փունջուխներով զարդարած կանգնաչափ փայտ է, որ ցցում են ուղտի համետի վրա, որպեսզի ուղտին աչքով չտան»[91]:

Կապույտ գույնը, անկախ պահպանակի տեսակից, ինքնին չարխափան էր համարվում: Նախկինում երեխաներին չար ոգիներից և չար աչքից պաշտպանելու համար նրանց կապույտ շորեր էին հագցնում, կապույտ ուլունք կախում վզից, թևից, կարում էին հագուստին և գլխարկին: Անգամ կովերի ճակատից էին կապույտ ուլունք կախում[92]: Մուշի գավառի Յոթաղբյուրներ գյուղում ընդունված է եղել երեխաներին չարքերից և չար աչքից պաշտպանելու համար կապույտ խաչաձև կտորի վրա կարել «նոր» (նորալուսնի նման կտրած) դրամը, խեցիներ, կապույտ ուլունքներ ու ամրացնել մանկան ուսին: Նաև կարմիր գույնի կտորե խաչի վրա խեցիներ էին կարում և ամրացնում երեխաների թիկունքին, ուսին կամ գլխարկին: Կապույտ ուլունքը կարում էին մեզարի (գոգնոց) գոտուն, որպեսզի «չար աչքը չբռներ», և խնոցուն, որպեսզի կարագը շատ լիներ[93]: Կապույտը՝ որպես չար աչքից պաշտպանող գույն, հիշատակվում է աչքի աղոթքում.

Ով աչքը ըչքահարե՝

---

[87] *Վ. Պ ե տ ռ ո յ ա ն. նշվ. աշխ., էջ 112:*

[88] С. Б. Б е р ш т е й н. Болгарско- русский словарь. М., 1975, с. 309.

[89] *Խ. Ս ա մ ո ւ ե լ յ ա ն Հին Հայաստանի կուլտուրան, հ. I, Երևան,1931, էջ 187:*

[90] *Հաղորդել են ազգագրագետ Մարիետա Կիրակոսյանը և պատմաբան Ավետիս Հարությունյանը:*

[91] *Ս ա հ ա կ վ ա ր դ ա պ ե տ Ա մ ա տ ո ւ ն ի. Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912, էջ 507:*

[92] *ԴԱՆ, գ. Զոլաքար, Մարտունու շրջան, էջ 1:*

[93] *ԴԱՆ, Կամո, Մարտունի, էջ 46, 48, 50:*

Քրիստոսը նրա աչքը հանե:
Կապիտ եզը լծեցի,
Կապիտ կովը կթեցի,
Կապիտ մածուն հանեցի,
Կապիտ խնոցի հարեցի,
Կապիտ մարդ, կապիտ կնիկ.
Թե մարդ ա աչք տվել՝
Աչքը դուս գա,
Թե կնիկ ա աչք տվել՝
Ճավլը վեր գա[94]*:*

Կապույտ էր նաև այն կտորը, որի մեջ էին դնում եռանկյունաձև ծալված, մոմով պատված գրավոր աղոթքը, ինչն էլ կախում էին երեխայի թևից, խնոցու պարանից կամ դնում էին բարձի մեջ[95]*:*

Հարսանիքի ժամանակ նորապսակների գրպանը յոթ հանգույցով կապույտ թել էին դնում: Հատկապես այդ ժամանակ էր, որ տղամարդկանց ծիսական հագուստի վրա պարտադիր էին ասեղնագործ կապույտ նախշերը և ուլունքները, որոնք և՛ երևացող տեղերում էին կարվում՝ թևքերին, կրծքին, և՛ չերևացող, ինչպես նաև՝ ոտքերի փողքերի ներսի կողմից:

Քեսապում՝ «Նորահարսին կեսրայրին կողմէ տրուած լաւագոյն նուէրը մեկ տարեկան մոզին էր... Կինը կը մաքրէր կովուն ախոռը, կը կերակրէր կենդանին, երբեմն կ'արածէր եւ արտերէն թարմ ու առատ խոտ կը բերէր շալակով անոր համար, կապոյտ հլուն կը կապէր ճակատին, կը ծխէր, երբ չար աչքէ կասկած ունենար»[96]*:*

Կապույտը սրբազան է, մաքրագործող, կապվում է երկնքի և ջրի հետ. Հարքի առավոտյան արշալույսի աղոթքում ասվում է. «Էյ կապույտ վրան (երկինք) քի իմ ապավինի»[97]*: Ջրի կապույտն ընդգծվում է Սասնա ծռերում. «Եղբայները ճանապարհ են ընկնում իրենց պապի մոտ... Սանասարն ու Բաղդասարը գնում են նույն ծովի ափը, որտեղ ժայռից բխող աղբյուրը նրանց կյանքի էր կոչել... Շարունակում են իրենց ճանապարհը: Եղբայրներին զարմացնում է այն, որ կապույտ ջրի մի բարակ շերտ կտրում-անցնում է մեծ գետի ամբողջ հոսանքը: Գայթակղված այդ փոքր ջրի մեծ ուժից, Սանասարն ու Բաղդասարը գտնում են կապույտ ջրի ակունքն ու այնտեղ վիթխարի ապառաժներից ամրոց կա-*

---

[94] *Ս. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 85–86:*

[95] *ԴԱՆ, Պտղնի, 1976, էջ 2:*

[96] *Յ. Չ ո լ ա ք ե ա ն. Քեսապ (պատմա-ազգագրական ուսումնասիրություն).– Ատենախօսութիւն, Երեւան, 2016, էջ 148:*

[97] *Բ ե ն ս է. նշվ. աշխ., էջ 19:*

ռուցում[98]«: Հեքիաթներում ծովից դուրս եկող հրաշալի ձիերն են կապույտ: Ջրի հետ կապված պատկերացումներում էական է, որ ջուրը և՛ երկնքում է, և՛ երկրի վրա. «Երբ Աստված բաժանեց երկինքն ու երկիրը, ջրի մի մասը երկնքում մնաց»[99]: Չինաստանում Երկնքի Զոհասեղանի վրա զոհ մատուցելու և բերքի համար աղոթելու ժամանակ կապույտ զգեստ էին հագնում[100]: Հին Եգիպտոսում կապույտը հարության, վերածննդյան խորհրդանշական գույնն էր[101]:

Կապույտը որպես ջրի խորհրդանիշ հանդիսացող գույն է ի հայտ գալիս Դաղստանում՝ անձրև բերելու ծեսում: Այստեղ կապույտ կավով էին ներկում «Հովվի քարը», երբ ցանկանում էին անձրև բերել և սպիտակ գույնի, երբ կամենում էին, որ արևը դուրս գար[102]:

Իբրև հմայական միջոց՝ Վարանդայում կապույտ գույնն օգտագործվում էր ծննդաբերության ժամանակ. երբ ծննդկանն ուշաթափվում էր, ենթադրվում էր, որ դա քաջքերի պատճառով էր տեղի ունենում և նրա դեմքին լեղակ էին քսում, որպեսզի չարքերին փախցնեին[103]: Նորածին երեխայի կրծքին փոքրիկ պարկով լեղակ են դնում նույն նպատակով: «Մանուկները նազարէ հեռու պահելու համար կը զրահաւորեն օխտը ծակէն կապոյտ հիլուններ կտտելով վրան կամ բոլորովին կապոյտ գոյնով զգեստ կը հագնին եւ ծոծրակին վրայ լեղակ կը քսեն»[104],– գրում է Ա. Պատրիկը: Երեխաներին բուժելու համար ևս կարևորվում էր հատկապես կապույտը: Օրինակ՝ երբ երեխան փորացավ է ունենում, նրան պետք է դնել բամբակե կապույտ կտորի մեջ և օրորել որպես դարման ու երեք անգամ ոտքերից բռնելով շրջել՝ որպես նվերք[105]:

Կապույտով բուժում են նաև լուսնից հիվանդացած երեխաներին: Ըստ Շիրակում տարածված հավատալիքների, երբ լուսինը «տեսնում է երեխային», այսինքն՝ նրա շողն ընկնում է երեխայի վրա կամ երբ նրա հագուստները գիշերը դուրսն են մնում, նա հիվանդանում է և բուժելու համար նրան տանում են նախապես օրհնված ներկարարի այն կարասի մոտ, որի մեջ կապույտ ներկն է: Երեխան հոտ է քաշում դրանից և բուժվում է: Կամ երեխայի շորերն են այդ ներկով ներկում: Բացի այդ, կապույտ ներկը քսում են երեխայի քթին, քիմքին ու ճակատին, որպեսզի կապույտ ներկի հոտից լավանա[106]: Սիսիանում երեխայի կրծքին լեղակ են կախում տոպրակիկով, որպեսզի սատանաները փախչեն, իսկ

---

[98] *Սասունցի Դավիթ, Նախաբանը՝ ակադեմիկոս Հ. Օրբելու, Երևան, 1961, էջ VII–VIII:*

[99] *Ե. Լ ա լ ա յ ե ա ն. Ջաւախք, էջ 347:*

[100] Л. С ы ч е в, В. С ы ч е в. Китайский костюм. М., 1975, с. 30.

[101] Mohamed Saleh and Hourig Sourouzian. The Egyptian Museum, Cairo, Mainz, 1987, p. 80.

[102] Р. И. С е ф е р б е к о в. Пантеон языческих божеств народов Дагестана. Махачкала, 2009, с. 273.

[103] *Ե. Լ ա լ ա յ ե ա ն. Վարանդա, էջ 146:*

[104] *Ա ռ ա ք ե լ Ն. Պ ա տ ր ի կ. Պատմագիրք յուշամատեան Սեբաստիոյ եւ գաւառի հայութեան, հ. Բ, Նիւ Ճըրզի, 1983, էջ 146:*

[105] *Յ. Ճ ա ն ի կ ե ա ն. նշվ. աշխ., էջ 162:*

[106] *ԴԱՆ, Քեթի, Ախուրյանի շրջ., 1974, էջ 2–3:*

չար աչքից հիվանդացած կենդանուն բուժելու նպատակով նրա փորի տակ կապույտ կտոր են այրում[107]: Հմայակների մեջ կան կապույտ գույնի ասեղնագործ երիզներ, թելափնջեր, հատկապես տարածված են կապույտ ուլունքները և գրեթե միշտ կապույտ է այն կտորը, որի մեջ հմայագրերն են դրվում: Օրինակ՝ Սևանի ավազանում վերաբնակված ալաշկերտցիները հիվանդին բուժելու համար գրով թուղթը ծալում են, կապույտ կտորով փաթաթում են և դնում բուժվողի բարձի մեջ[108]:

Հայաստանում տարածված կապույտ ներկը հնագույն ժամանակներից ի վեր ստացել են ինդիկատու բույսերից (օր.՝ Indifors tinctoria): Հայ մատենագրության մեջ ինդիգոն կոչվել է լեղակ՝ օգտագործվելով նաև բժշկության մեջ: Այնպես որ, վերը նշված դեպքերը պատահականության արդյունք չեն: Ըստ Ամիրդովլաթ Ամասիացու, լեղակի կիրառման եղանակները եղել են արտաքին ու ներքին: Առաջին դեպքում պատրաստել են քսուքներ կամ լեղակատու տերևները կպցրել են վերքին, ուռուցքին, իսկ երկրորդում՝ ընդունել են հյութի կամ փոշու ձևով[109]: Ժողովրդական պատկերացումներում գույներին տրվող գործառույթները կարող են կապված լինել որոշակի ասոցիացիաների հետ. օրինակ՝ կարմրուկով հիվանդացած երեխային բուժելիս սենյակում կարմիր գույնը պետք է գերիշխի և, ինչպես նշվեց, երեխան կարմիր շորեր պետք է հագնի:

Ներկայում գույներով բուժումը կիրառվում է հատկապես այն դեպքերում, երբ դասական բժշկության ավանդական եղանակներն անզոր են: Լույսն էլեկտրամագնիսական ալիքների հավաքածու է, և գույնը կախված է ալիքի երկարությունից: Տարածության մեջ, գտնվում են տարբեր հաճախականության ահռելի քանակությամբ ալիքներ: Յուրաքանչյուր օրգանին համապատասխանում է որոշակի հաճախականություն և գույն, որը էլեկտրամագնիսային բնույթի շնորհիվ փոխազդեցության մեջ է մտնում մարդու օրգանիզմի էներգետիկ կառուցվածքների հետ՝ ուժեղացնելով կամ ճնշելով դրանց վիբրացիաները: Դրանք փոփոխություններ են առաջացնում նաև ֆիզիկական մակարդակում:

Գունաթերապիայի մեթոդը կառուցված է այն օրենքի հիման վրա, որի համաձայն գույների ռեզոնանսները համընկնում են օրգանի հաճախականության բնութագրին: Կատարվում է դաստակների և ներբանների շրջանների (չակրաների էներգետիկ կետերի, միջօրեականների ակուպունկտուրային կետերի և դրանց շրջապատող ալիքների) ռեզոնանսային փոխազդեցությունը գույնի աղբյուրի (բնական կամ արհեստական) նմանատիպ հաճախականությունների հետ: Լուսային ճառագայթը օրգանիզմի բջիջների շփման լեզուն է: Նրա գունային գամման նպաստում է հիվանդության պատճառով խախտված էներգետիկ հավասարակշռության վերականգնմանը: Գույների բուժական ազդեցությունը կապված է մեր օրգանների և հոգեկան կենտրոնների վրա որոշակի երկարության ալիքների ներգործության հետ: Գույների ազդեցություններն առանձնահատուկ ներգործութ-

---

[107] ԴԱՆ, Սիսիան, 1974, էջ 30, 38:

[108] ԴԱՆ, Կամո, Մարտունի, էջ 29:

[109] Հայկական սովետական հանրագիտարան, հ. 4, Երևան, 1978, էջ 334:

յուն ունեն տարբեր հիվանդությունների դեպքում: Յոգերի պատկերացմամբ մեր օրգանիզմն ունի որոշակի կենտրոններ (չակրաներ), որոնք կանոնավորում են կենսաբանական էներգիայի հոսքը: Յուրաքանչյուր չակրա ունի իր գույնը՝ կախված վիբրացիաներում գերակշռող հաճախականություններից: Առողջ մարդու աուրան ունի մաքուր գույներ: Շատ հիվանդություններ պայմանավորված են գունային (էլեկտրամագնիսային) ներդաշնակության խախտմամբ, գույները խառնվելով, ինչպես նաև որոշակի այն գույնի բացակայությամբ, որն անհրաժեշտ է օրգանների նորմալ կենսագործունեության ու հոգեբանաէմոցիոնալ վիճակի համար: Մյուս կողմից գույնն ազդում է մարդու աչքի ծիածանաթաղանթի վրա, որն անդրադարձական (ռեֆլեկտոր) ձևով կապված է ներքին բոլոր օրգանների և ուղեղի հետ: Դրա շնորհիվ էլ գույները, ներգործելով աչքի վրա, ռեֆլեկտոր կերպով տարբեր զգայություններ և օրգանների կենսագործունեության փոփոխություններ են առաջացնում: Գույնն ազդում է նաև ակուպունկտուրային կետերի վրա, որի շնորհիվ օրգանին կամ համակարգին էներգիա է հաղորդում, երբ համապատասխան գույնն են քսում դրանց վրա: Գույները տաք ու սառն են: Տաք գույներն են՝ կարմիրը, նարնջագույնը, դեղինը: Սառը գույներն են՝ երկնագույնը, կապույտը, մանուշակագույնը: Կանաչը միջանկյալ է: Տաք գույները գրգռում են, խթանում են, սառը գույները հանգստացնում են, թուլացնում: Կանաչը դանդաղ ու մեղմ է ազդում: Գունաթերապիան հիվանդին օգնում է փոխել իր վերաբերմունքը կյանքի նկատմամբ, պայքարել առողջության համար, հանգստացնել նրան կամ խթան հանդիսանալ, որի շնորհիվ բուժման ընթացքը կարագանա: Ազդեցությունը տեղի է ունենում օրգանիզմի, հատկապես կենսաբանորեն ակտիվ կետերի և զոնաների վրա՝ իմունային համակարգը խթանելու նպատակով[110]:

Ակնհայտ է, որ գեղեցիկ գույներով ու երանգների նրբաճաշակ համադրություններով գեղանկարներն անմիջականորեն ազդում են մարդկանց տրամադրության վրա, փոխում են դիտողի ներաշխարհը, հոգեվիճակը, ինչպես, օրինակ, հայ նկարիչներից Մարտիրոս Սարյանի, Հարություն Կալենցի, Էդման Այվազյանի, Անահիտ Զարդարյանի և բազմաթիվ այլ նկարիչների աշխատանքներից շատերը:

[110] http://www.Biopulse.org/color–ru.html

МАГИЧЕСКАЯ СИЛА ЦВЕТА В АРМЯНСКИХ НАРОДНЫХ ВЕРОВАНИЯХ

АСТХИК ИСРАЕЛЯН

Резюме

В народных верованиях цвета связываются с сакральными числами –семь, три, два. Они упоминаются в благословениях, молитвах, песнях, сказках. Определенные цвета (черный, белый, красный, зеленый, желтый, синий) и сочетания цветов защищают от злых духов, сглаза, имеют важное значение в целительстве, свадебном обряде, во время крестин. Методом цветотерапии восстанавливается нормальная жизнедеятельность организма.

MAGICAL POWER OF COLORS IN ARMENIAN FOLK BELIEFS

ASTGHIK ISRAELYAN

Summary

According to folk beliefs colors (black, white, red, green, yellow, blue) are connected with sacred numerals–seven, three, two. They are often met in blessings, incantations, songs and fairy-tales. Definite colors and combinations defend from the evil eye and the evil spirits. They are used in healing, recovering vital activity, at the rites of wedding and christening. By the method of color therapy normal vital activity is recovered.